ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունները՝ նկատի ունենալով Համագործակցության պետությունների ղեկավարների Խորհրդի եւ Կառավարությունների ղեկավարների Խորհրդի արդյունավետ գործունեության համար պայմանների ստեղծման անհրաժեշտությունը, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Հաստատել պետությունների ղեկավարների Խորհրդի եւ պետությունների Կառավարությունների ղեկավարների Խորհրդի ընթացակարգի ժամանակավոր կանոնները (կցվում են):

ՀՈԴՎԱԾ 2

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների Կառավարությունների ղեկավարների Խորհրդի եւ պետությունների ղեկավարների Խորհրդի ընթացակարգի ժամանակավոր կանոնների վերաբերյալ վերապահումները եւ միակողմանի ուղղումները որոշվում են իրենց կողմից:

Կատարված է Տաշքենդ քաղաքում 1992 թվականի մայիսի 15-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության Կառավարության արխիվներում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած պետություններին կուղարկի Համաձայնագրի հաստատված պատճենները:

Հավելված
Անկախ Պետությունների
Համագործակցության մասնակից
պետությունների ղեկավարների
Խորհրդի եւ Կառավարությունների
ղեկավարների Խորհրդի
ընթացակարգի ժամանակավոր
կանոնների մասին
Համաձայնագրին կից

ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Կանոն 1

Պետությունների ղեկավարների Խորհրդի եւ Կառավարությունների ղեկավարների Խորհրդի գործունեությունը, այսուհետ՝ Խորհուրդ, կարգավորվում է Անկախ Պետությունների Համագործակցության ստեղծման մասին Համաձայնագրով, Անկախ Պետությունների Համագործակցության պետությունների ղեկավարների Խորհրդի եւ Կառավարությունների ղեկավարների Խորհրդի մասին Ժամանակավոր Համաձայնագրով, դրանց զարգացման համար կնքվող համաձայնագրերով, ինչպես նաեւ ընթացակարգի սույն ժամանակավոր կանոններով:

Կանոն 2

Յուրաքանչյուր հաջորդ նիստի անցկացման ժամկետների եւ նախնական օրակարգի մասին որոշումն ընդունվում է Խորհրդի հերթական նիստի ժամանակ, եթե Խորհուրդն այլ բան չի որոշում:

Օրակարգի վերջնական նախագիծը պետք է ձեւավորվի Համագործակցության մասնակից պետությունների արտաքին գործերի նախարարների կողմից՝ Խորհրդի հերթական նիստը սկսվելուց առնվազն 20 օր առաջ: Հարցերի ներառումը օրակարգում նշված ժամկետից ուշ չի թույլատրվում, բացառությամբ խաղաղության սպառնալիքի, խաղաղության խախտման կամ ագրեսիայի գործողության իրավիճակների ծագման, ինչպես նաեւ անհապաղ բնույթի այլ իրավիճակների դեպքում որոշումների ընդունման:

Համագործակցության մասնակից պետությունների արտաքին գործերի նախարարների խորհրդակցությունը օրակարգի վերջնական նախագծի ձեւավորման ժամանակ իրավասու է որոշումներ ընդունել նիստում՝ Համագործակցության մասնակից պետությունների ներկայացուցիչների առնվազն կեսի առկայության դեպքում:

Խորհրդակցության որեւէ պետության ներկայացուցչի բացակայությունը հիմք չի հանդիսանում օրակարգի վերջնական նախագծի վերանայման մասին հարցադրման համար: Օրակարգի վերջնական նախագիծը աշխատանքային խումբը պետք է ուղարկի պետությունների ղեկավարների Խորհրդի եւ Կառավարությունների ղեկավարների Խորհրդի նիստերի կազմակերպչատեխնիկական նախապատրաստման եւ անցկացման համար Համագործակցության բոլոր մասնակից պետություններին՝ նիստը սկսվելուց առնվազն 2 շաբաթ առաջ:

Կանոն 3

Եթե օրակարգի կետին համապատասխան պահանջվում է բազմակողմ փաստաթղթի ընդունում, ապա փաստաթղթի մշակման մասին առաջարկությունը կամ առաջարկության նախագիծը տվյալ փաստաթղթի ընդունման համար մտցվում են Խորհրդի ենթադրվող նիստին նախորդող նիստի օրակարգ:

Խորհուրդը որոշում է ընդունում առաջարկված փաստաթղթի մշակման եւ ստորագրման նախապատրաստման նպատակահարմարության մասին:

Կանոն 4

Համապատասխան փաստաթղթի ստորագրման նախապատրաստման մասին որոշման ընդունման հետ միաժամանակ Խորհուրդը ստեղծում է աշխատանքային խումբ փաստաթղթի համաձայնեցված տեքստի նախապատրաստման համար, ինչպես նաեւ սահմանում է նրա աշխատանքի կարգը՝ նշելով նրա մանդատը եւ նախագծի նախապատրաստման ժամկետները:

Կանոն 5

Փաստաթղթի նախապատրաստման աշխատանքային խումբը Խորհրդի նիստը սկսվելուց առնվազն 30 օր առաջ, որտեղ նախատեսվում է փաստաթղթի ընդունումը, պետությունների ղեկավարների Խորհրդի եւ Կառավարությունների ղեկավարների Խորհրդի նիստերի կազմակերպչատեխնիկական նախապատրաստման եւ անցկացման համար աշխատանքային խմբի միջոցով ներկայացնում է Համագործակցության բոլոր մասնակից պետություններին նախագծի տեքստը, ինչպես նաեւ փաստաթղթի ընդունման կամ դրա վերաբերյալ աշխատանքի շարունակման նպատակահարմարության մասին իր դատողությունները եւ առաջարկությունները՝ գրավոր:

Կանոն 6

Համապատասխան նիստը սկսվելուց առնվազն 30 օր առաջ, Խորհրդի նիստում քննարկման չեն ընդունվում նախագծի տեքստի նախապատրաստման համար Խորհրդի կողմից չընդունած եւ փորձագետների խմբերում համաձայնեցում չանցած, ինչպես նաեւ փորձագետների աշխատանքային խմբերի կողմից պետությունների ղեկավարների Խորհրդի եւ Կառավարությունների ղեկավարների Խորհրդի նիստերի կազմակերպչատեխնիկական նախապատրաստման եւ անցկացման համար Աշխատանքային խմբին ներկայացված փաստաթղթերը:

Կանոն 7

Խաղաղության սպառնալիքի, խաղաղության խախտման կամ ագրեսիայի գործողության

իրավիճակների ծագման, ինչպես նաեւ տարերային աղետների, վթարների, աղետների դեպքերում անհապաղ որոշումների ընդունման անհրաժեշտությունից ելնելով, Խորհուրդը թույլատրում է փաստաթղթերի ընդունումը՝ առանց ընթացակարգի սույն ժամանակավոր կանոնների պահանջների պահպանման:
Այլ դեպքերում ընթացակարգի սույն ժամանակավոր կանոններից շեղում չի թույլատրվում:

Կանոն 8

Խորհրդի արտահերթ նիստերը հրավիրվում են Համագործակցության մասնակից պետությունների Կառավարությունների ղեկավարների կամ պետությունների ղեկավարների մեծամասնության նախաձեռնությամբ:

Կանոն 9

Խորհրդի նիստերը, որպես կանոն, անց են կացվում Մինսկում: Խորհրդի նիստը պայմանավորվածությամբ կարող է անցկացվել Համագործակցության մասնակից պետություններից որեւէ մեկում:

Կանոն 10

Խորհրդի նիստին մասնակցության համար լիազորություններ պահանջվում են, եթե նիստին մասնակցում է ոչ թե պետության կամ կառավարության ղեկավարը, այլ նրանց կողմից լիազորված անձը:
Լիազորությունները ներկայացվում են մինչեւ նիստի սկսվելը Աշխատանքային խմբի համակարգողին, որը տեղեկացնում է Խորհրդին ներկայացված լիազորությունների մասին:

Կանոն 11

Պետությունների կամ Կառավարությունների ղեկավարները հաջորդաբար նախագահում են Խորհրդի նիստերին՝ Համագործակցության մասնակից պետությունների անվանումների ռուսերեն այբբենական կարգով:

Կանոն 12

Խորհրդում յուրաքանչյուր պետություն ունի մեկ ձայն: Խորհրդի որոշումները ընդունվում են հետեւյալ բանաձեւով՝ միաձայնություն հանած մեկ ձայն: Այդ դեպքում ընդունված որոշումը պարտադիր է բոլորի համար: Միաձայնությունը սահմանվում է որպես քննարկվող հարցի վերաբերյալ որոշման ընդունման դեմ որեւէ ներկայացուցչի կողմից ցանկացած առարկության կամ առաջ քաշվող խոչընդոտի բացակայություն:
Ընթացակարգային հարցերով որոշումները ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:
Ցանկացած պետություն կարող է հայտարարել այս կամ այն հարցում իր ոչ շահագրգիռ լինելու մասին, ինչը խոչընդոտ չի հանդիսանում որոշման ընդունման համար:
Ցանկացած պետություն կարող է պահանջել, որ իր հատուկ կարծիքը արտացոլված լինի նիստի Արձանագրության մեջ:

Կանոն 13

Քննարկվող հարցերի, ըստ էության, արված առաջարկությունները, ինչպես նաեւ դրանց վերաբերող ուղղումները Նախագահին ներկայացվում են գրավոր եւ, ինչպես ընդունված առաջարկությունները, տարածվում են բոլոր մասնակիցների շրջանում:
Նիստին մասնակցող ներկայացուցչի խնդրանքով, այս կամ այն որոշումների վերաբերյալ նրա պաշտոնական վերապահումները կամ մեկնաբանող հայտարարությունները պետք է ամրագրվեն եւ տարածվեն նիստի մասնակիցների շրջանում:

Հավասար կերպով պետք է ամրագրվեն եւ տարածվեն մասնակիցներից որեւէ մեկի պաշտոնական վերապահումների կամ մեկնաբանող հայտարարությունների վերաբերյալ մյուս մասնակիցների առարկությունները:

Կանոն 14

Նիստի ժամանակ Նախագահը գրանցում է հռետորների ցուցակը: Նա մասնակիցների համաձայնությամբ կարող է նիստը փակ հայտարարել: Սակայն նա ցանկացած ներկայացուցչի պետք է պատասխանի իրավունք տրամադրի, եթե դա ցանկալի լինի՝ կապված ցուցակի փակումից հետո արված որեւէ ելույթի հետ:
Խորհրդի նիստերը, որպես կանոն, փակ են, եթե պետությունների կամ Կառավարությունների ղեկավարները այլ որոշում չընդունեն:

Կանոն 15

Խորհրդի պաշտոնական լեզուներն են Համագործակցության մասնակից պետությունների պետական լեզուները:
Աշխատանքային լեզուն ռուսերենն է:
Խորհրդի նիստերի մասին պաշտոնական հաշվետվությունները կատարվում են ռուսերենով:

Կանոն 16

Պետությունների ղեկավարների Խորհուրդը եւ Կառավարությունների ղեկավարների Խորհուրդը կարող են համատեղ նիստեր անցկացնել:

Կանոն 17

Համագործակցության մասնակից չհանդիսացող պետության ներկայացուցիչը ընդհանուր համաձայնությամբ կարող է Խորհրդի նիստին ներկա լինել որպես դիտորդ:
Դիտորդները չեն մասնակցում որոշումների ընդունմանը:

Կանոն 18

Խորհրդի որոշմամբ կարող են ստեղծվել աշխատանքային եւ օժանդակ մարմիններ, ինչպես մշտական, այնպես էլ ժամանակավոր հիմունքներով:
Դրանք ձեւավորվում են Համագործակցության մասնակից պետությունների լիազոր ներկայացուցիչներից: Դրանց նիստերին մասնակցելու համար կարող են ներգրավվել փորձագետներ եւ խորհրդատուներ:

Կանոն 19

Խորհրդի նիստերի կազմակերպչատեխնիկական նախապատրաստումը եւ անցկացումը իրականացնում է Աշխատանքային խումբը՝ այդ խմբի մասին ժամանակավոր կանոնադրությանը համապատասխան:

Կանոն 20

Ընթացակարգի սույն ժամանակավոր կանոնները ընդունվում են միաձայնության սկզբունքով: Ընդունելուց հետո դրանք կարող են փոփոխվել միայն միաձայնության սկզբունքով:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1992 թվականի մայիսի 15-ից: